ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀՖՖ») Բողոքարկման կոմիտեի նիստը կայացել է քաղաք Երևանում 2022թվ. հոկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին, իսկ արձանագրությունը կազմվել է 2022թվ. հոկտեմների 23-ին:

Բողոքարկման Կոմիտեի նիստի կայացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, ՀՖՖ գրասենյակ, Խանջյան 27:

Բողոքարկման Կոմիտեի նիստի անցկացման կարգը՝ բաց:

Բողոքարկման Կոմիտեի նիստին մասնակցել են կոմիտեի բոլոր 5 անդամները՝ Արմեն Դավթյանը, Դավիթ Սարգսյանը, Զոհրապ Եգանյանը, Արամ Արոյանը և Կարեն Ասատուրյանը:

Բողոքարկման Կոմիտեի նիստն անցկացնելու համար պահանջվող քվորումն ապահովված էր:

Բողոքարկման Կոմիտեի նիստը վարում էր ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի նախագահ Արմեն Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

1. ՀՖՖ Բողոքարկման Կոմիտեին ԲԿՄԱ ֆուտբոլային ակումբի կողմից ներկայացված բողոքի քննարկումը

Նիստի բացման ժամանակ Դավիթ Սարգսյանը տեղեկացրեց, որ իր մոտ առկա է շահերի բախում, քանի որ իր տղան հանդիսանում է ԲԿՄԱ ֆուտբոլային ակումբի առաջին խմբի թիմի ֆուտբոլիստ և ինքը զերծ կման նիստին մասնակցելուց: Նիստը շարունակվեց առանց Դավիթ Սարգսյանի մասնակցության:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հարցը ներկայացրեց Կոմիտեի նախագահ Արմեն Դավթյանը, նշելով, որ ԲԿՄԱ կողմից 2022թվ. հոկտեմբերի 20-ին ՀՖՖ հասցեագրված գրությամբ ներկայացրել է բողոք ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի Կոմիտեի որոշման դեմ՝ համաձայն որի ԲԿՄԱ ֆուտբոլիստ Դանիել Մելիքի Աղբալյանն որակազրկվել էր երեք խաղով՝ խնդրելով մեղմացնել պատիժը, քանի որ եղել է խաղային դրվագ, ֆուտբոլիստի կողմից որևէ միտումնավոր գործողություն չի եղել:
ԲԿՄԱ կողմից ներկայացված դիրքորոշման շուրջ տեղի ունեցավ շահագրգիռ քննարկում Կոմիտեի անդամների միջև:

Կոմիտեն միաձայն ընդունեց հետևյալ որոշումը, ընդ որում Դավիթ Սարգսյանը չմասնակցեց քվեարկությանը.

<u>ՈՐՈՇՈՒՄ 1</u>

1.1 ԲԿՄԱ ՖԱ կողմից ՀՖՖ Բողոքարկման Կոմիտեին ներկայացված բողոքը բավարարել մասնակիորեն և ԲԿՄԱ ՖԱ ֆուտբոլիստ Դանիել Մելիքի Աղբալյանի որակազրկումը փոփոխել և դարձնել 2 հանդիպում:

1.2 Բողոքարկման Կոմիտեի որոշումը վերջնական է և բեկանման ենթակա չէ:

Նախագահ՝	Արմեն Դավթյան
Անդամներ՝	Զոհրապ Եգանյան
	Կարեն Ասատուրյան
	Արամ Արոյան